# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արմենֆարմ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-4-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 60 | Էնզիմեքս L9 | Ֆրանկլաբ | Բաղադրությունը- իրենից ներկայացնում է բուրանյութի հոտով թափանցիկ հեղուկ խտանյութ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է N,N-դիդեցիլ-Nմեթիլպոլի(օքսիէթիլ) ամոնիումի պրոպիոնատ (ՉԱՄ), դիդեցիլ դիմեթիլ ամոնիումի քլորիդ (ՉԱՄ), ֆերմենտների համալիր (լիպազա, ալֆաամիլազա, պրոտեազա), ինչպես նաև ֆունկցիոնալ բաղադրամասեր՝ ՄԱՆ (մակերեսային ակտիվ նյութեր), ներկանյութ, բուրանյութ, ջուր և այլն: Ներկայացվող ապրանքը պարունակում է նաև կոռոզիայի ինհիբիտորներ (կազմի մեջ կոռոզիոն ինհիբիտորի առկայությունը հաստատված է օգտագործման հրահանգով): Առաջարկվող ախտահանիչ նյութը իր բաղադրությունում չի պարունակում որպես ակտիվ բաղադրիչներ քլոր, ալկոհոլ: Փաթեթավորումը- 1լիտր պոլիէթիլենային տարա համապատասխան չափիչ բաժակով: 1լիտր խտանյութից պատրաստվում է 0,5%- 200 լիտր աշխատանքային լուծույթ, որն ապահովում է հակաբակտերիալ `գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ՝ տուբերկուլյոզի միկոբակտերիաները), հակավիրուսային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | (ներառյալ արտաընդերային հեպատիտները, ՄԻԱՎ-վարակը, պոլիոմիելիտը), A գրիպի H5N1, H1N1տեսակները) և հակասնկային (այդ թվում՝ կանդիդա և դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) ազդեցությունը 5-30 րոպեում (ինչը հաստատված է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով), ինչպես նաև օժտված է ակտիվությամբ հատուկ վտանգավոր վարակների (ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, լեգիոնելոզի) հարուցիչների նկատմամբ: Աշխատանքային լուծույթի պատրաստման համար պահանջվող ջերմաստիճանը 15°C- 25°C : Աշխատանքային լուծույթի պիտանելիությունը 14 օր է, նախատեսված բազմակի օգտագործման համար: Մատակարարման պահին խտանյութի ժամկետի 1/2-ի առկայություն: Ախտահանիչ նյութի pH - 7,8-8,8: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար, հաշվարկները կատարվում են համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից հաստատված համապատասխան մեթոդական հրահանգների և ՀՀում գործող սանիտարական նորմերի՝հիմք ընդունելով հակաբակտերիալ (ներառյալ տուբերկուլյոզը), հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Վտանգավորության աստիճանը4-րդ, 5-րդ: Ունենա որակի հավաստագիր, ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգ: Նոր է, չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Արմենֆարմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-4-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 60 | | | |